

Խմբագրութեանս ուղղուած նա-
մակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր:

Բնութեան փնհանդիյնիդ ու մարդուն
ընթացումները՝ իրարու միացած՝ երբեմն
անօրինակ կերպով կը յեղաշրջեն աշխարհի
երեւոյթը. ինչ որ բուն հետաքրքրութիւն

Նոր բան մը յունիկ հաղորդելու աշխատեցին եւ բանակցութիւններուն վրայ որոնք կը կատարուին Պոլիս, դեպքաններուն միջեւ, մի՛շտ դանդաղ, մի՛շտ անհոյգ: Հեռագիրներն ու եւրոպական մամուլը իրար յոյս մը կուտան թէ հաշտութիւնը պիտի կրնայ կնկուիչ, Թուրքիոյ կողմէն ապաստած գիշումներով որոնք շունչ առնելը պիտի տան Յունաստանին, որ դիւանագիտութեան ցանցերուն մէջ բռնուած՝ կը մաքուի ու փրկութեան ելք մը չի կրնար գտնել:

ՔՐՕՆԻԿ

Երբ տաքերը կ'սկսին, Բարդուղիմեոսը Տիէր կամ ասոնց պէս տեղ մը կերթայ, Պոլսեցին վերին Վոսփոր, Կղզիները, Երզնաձոր, Եգիպտացիները՝ Աղեքսանդրիա կերթան...

Ամեն տեղ տաք կընէ Եգիպտոսի մէջ. բայց Աղեքսանդրիա ամենէն աւելի սակայն այս չարգելուոր որ կուշտ հողատէրը, պարարտ հասառուն, խաթր համար ամսական առնող պաշտօնեայն, պարտավորեցանք վճարելիք օրը մօտեցած վաճառականը, անգործ մնացած pick-pocketը, զգայալորի քօթօթը en rupture de michés ծանծրայած ամուսինը, պարկեշտութենէ յոգնած կինը, ամուսնախող աղջիկը և լքուած ու անմխիթար որբեւայրին հոն չերթան չի վազեն այս տոթագին օրերը անցնելու համար այն եղբրներուն մօտ՝ որոնց վրայ Կղէպոստրա իր մերկ մարմինը պտղեցուց առանց մտքին անցնելու թէ saison մը կընէ կոր:

Երեք օր անցուցի հոն: Ահագին սգեւորութիւն կը տիրէ ամեն տեղ: Փողոցները, սրճարանները, օթէլները, թատրոնները, պառարկները, վերջապէս ամեն խոտովանելի ու անխոտովանելի վայրերը լեցուն են բազմութեամբ մը որուն մէջ կը դիտես անգլիացիին ու ռուս ըսենը չի տանիր, որովհետեւ ինքն ալ կ'ուզէ բան մը աւելցնել այն հանդիմանքուն վրայ որոնցմով պիտի տօնուի Նորին Շնորհալի Վեհափառութեան աղափանդեալ յորեկանը. կը տեսնես նաեւ Փրանսացիին որ կը դարձանայ թէ ինչպէս կին մը կրնայ վաթսուս տարի շարունակ մինչոյն աթոռին վրայ նստիլ:

Հոս դերմանային աշխարհը գաւաթ մը դարձուրի մէջ կը խեղդէ, անոր մէջ կը մոռնայ օրուան խոնջէնքը և դարձեալ սակայն անոր մէջ կը փնտռէ վազուած կարովը. հոն՝ իտալացիին, կերգէ, կը սուլէ, կը թքէ, վիրճիլիս մը շրթներուն վրայ և կը սնդէ որ եթէ Մէնօթի կարիսպարտին Աթէնք չերթար, Յոյներուն գարծը... գէշ էր: Բայց Յոյնը տխուր է. խեղճին բերանը չի բացուիր: Առաջին անգամն է որ հելլենական շաղակրատութիւնը յոգնութիւն կ'ստնէ կոր:

Իսկ հայուն դիւրագգած մասը, ցուցունելու համար յաջա աշխարհի թէ Հայկի, Արամի, Սոհակ—Մեսրոպի գաւաղները ոչ ծոյլ են և ոչ դանդաղ հաստատելու համար իրենց աշխուժութիւնը, ձեռներէցութիւնը և աշխատասիրութիւնը, առտուրէ մինչեւ իրիկուն շարաշար կերպով... բալլու կը խաղան Քաֆէ տիւ Լուվոի կամարներուն ներքեւ, և ապացուցանելու համար թէ Փարոսը տղեղ, չի կարողացուելք, և «Փէլլասի լախտներու» թերթ մ'է... առաջ առաջ իրենք կը կարդան այն հեշտանքով եւ երանութեամբ իր... ձրի բաները կուտան մարդու:

* *

Բայց այս պատճառ մը չէ որ Աղեքսանդրիան՝ Աղեքսանդրիա ըլլալէ և Փարոսը՝ Փարոս ըլլալէ դադարին:

Եգիպտական բլածը իր ամուսնային արդուգարձը հազած՝ հրապոյտ ոչ զուրկ տեսարան մը կընծայէ դիտողին:

Կեանքի ազմուկով կը լեցուի այդ քաղաքը յուսնի հոկտեմբեր:

Մէհմետ Ալիի հրապարակին վրայ շարուած սքըճարանները իրենց յաճախորդները մայթերուն վրայ կը թափեն. կտրեր, ձիեր սրարշաւ կանցնին կերթան. ձերտակ, փայտուն, թեթեւ քաթիւմներով կիներ և այլեր երկաթէ ձիերու (որ թարգմանի պիսիֆեր) վրայ հեծած քաղաքը կ'աղօսեն, անթեւ, խոշոր թիթեռնիկներու նման, իրենց ետին ձգելով փաշիէ և կառապոններու հայհոյանքէ կազմուած հետքեր, առկիսուս ծախողը իր ծնծղալ-գաւաթներու զնդիւնը կ'աւելցնէ լրագրավոճառի ազմուկին, կազմելու համար միջնորոտ մը որ կը ցուցնէ զուլալ եւ կը խցնէ ականջներդ:

Զով կաղաւթիչ հով մը, մարուր օդ մը ծծելու համար Սան-Սթէֆանօ երթալու է. Սան-Սթէֆանօ ուր փոխանակ դիւանագիտական դաշնադրութիւններ կ'ընելու, սրտախրային դաշինքներ կը կնքուին ծովեզրին երկայնքը, վերանտային տակ, քիւլալին ներսը եւ քաղիւնցին չորս կողմը:

Եգիպտոսի ամբողջ բարձր դասը ժամադրութիւն տուած է հոն, լոգանքի, ֆլիրթի, կերուխումի, պարարայի եւ բոլոր պղտիկ մահացու մեղքերու մէջ մոռնալու համար Ռէօմիւրը և սանթիկրատը:

Ամենէն մեծ, ամենէն կարեւոր, և քաղաքական տեսակէտով ամենէն ծանր խնդիրները և ծրագիրները հոն կը յղացուին երկու գաւաթ վաւաքի միջեւ, անգլիական նուազախումբին պղնձ ներդաշնակութեան իւրօր և ի տես գեղանի և թարմ դէմքերու:

Ահա՛ ինչու Եգիպտոսի պիւտճէն տարին կէս միլիոնի յաւելում մը կը ցուցնէ: Յ. Ա.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն Ռիւզէրի հեռագիր մը հետեւեալը կը հաղորդէ: Սուլթանին պատասխանը՝ Հնդկաստանի խալիֆներուն ուղղեալ ընդարձակ նամակի մը ձեռնունի, բացատրելով ճշմարիտ իսլամաց պարտականութիւնները խալիֆային նկատմամբ, որոնք կը պահանջեն դրամական, բարոյական ու ֆիզիկական զոհողութիւններ: Կեղծակարծութիւն թէ խալիֆութեան ոյժը կը կայանայ միւսթեան մէջ:

«Այս նամակ յատուկ պատուիրակներու ձեռքով պիտի ղրկուի Հնդկաստան, Արաբիա և Եգիպտոս»:

— Բ. Դրան ու պոլիար իշխանապետութեան միջեւ յարաբերութիւնները ձգտուած կերեւին նորէն: Պոլիարական աղբիւրէ կը ծանուցուի թէ Սոֆիայի դահլիճը կը պահանջէ որ իրական բարեկարգութիւններ ներմուծուին ի Մակեդոնիա և կը պնդէ որ արեւելեան Բուլղարիա ռազմապետութեան համախառնած օսմի դորքերը ետ կանչուին: Իսկ թրքական ազդուրէ սաջափ միայն կըսուի թէ պուլկար գործակաւոր Պ. Մարքօֆ հրահանգ ստացեր է Բ. Դրան յիշեցունել այն խոտուսները որոնք Սուլթանին կողմէ եղած էին առ Պ. Սթոյկովի, Ֆէրիտինա իշխանին ի Կ. Պոլիս այցելութեանը միջոցին:

— Կրէտէի կառավարչութեան ընտրելիներուն վրայ նոր անուն մըն ալ աւելցաւ, Նուսա Տրօզ, Զուլայիլիյ զաշնակցային խորհուրդին նախկին նախագահը: Արդէն խօսք ալ կար թէ զուլայիլիյի ոստիկան-գլխավորներու գունդ մը պիտի կազմակերպուի կղզիին մէջ: Բայց այս տեսակ լուրեր դեռ չա՛տ պիտի լսենք, մինչեւ որ Կրէտէի կայսրութիւնը ճշդուի:

— Յունաստանի նախարարապետ Պ. Ռալլի յայտարարեր է Տէլլի Քրօնիէի Աթէնքի թղթակցին որ եթէ Տէրութիւններէն ոմանք պնդեն՝ եւրոպական քօնգրք մը հաստատելու համար հելլենական երեւոտքին վրայ, նախարարութիւնը պիտի հրաժարի ու թաղաւորը ոչ որ պիտի գտնէ՝ այդ պայմաններուն մէջ իշխանութեան գլուխ անցնող:

— Ֆրանսայի նախկին կայսրուհին Էօժէնի որ անցեալ շարժու Աթէնք՝ այցելեց, Կրէտէ ուղեւորեր է ուսից իջվի պիտի երթայ:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Երէկ գիշերուան Պոլսոյ Սուրհանդակով առնուած թերթերէն Ռիւզմիլիոնի յունիս 9ի թիւին մէջ կը կարդանք.

Յիշեցինք թէ այս կիրակի և այս երկուշաբթի երեք շոգենաւով Պուլկարիայէ և Եգիպտոսէ դարձած աղգայինք շոգենաւներէն դուրս չէին հանուած՝ վերադարձի վերջին պայմանաժամին լրացած ըլլալուն համար, և թէ յետոյ Ոստիկանութեան Դուռը փակադրուած էին՝ հրամանաւ Շէֆիգ պէյի: Կը լսենք թէ հաստատուած ըլլալով որ այս վերադարձող գաղթականներու ամենքն ալ օրինաւոր անցագիր ունին և թէ պատուաւոր ու երաշխաւորեալ անձինք են, երէկ և առջի օրը մաս առ մաս արձակուել են ամբողջովին: Վերադարձողներն հոգ պէտք է տանին իրենց գտնուած տեղերուն օսմի հիւպատոսներէն օրինաւոր անցագիր առնելու. որովհետեւ պայմանաժամին լրացած ըլլալը բաւական պատճառ մը կը նկատուի՝ ցարդ եղած թոյլտուութիւնը կը ճատելու:

ԴԵՊԻ ՊՕԼԻՍ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ Պ. Վ. Բ.

Բ.

Դաւառները կամ Պոլսոյ մէջ հայերուն աշխատութիւնը տեսնողները մէկէն ի մէկ ընդվիզում մը կ'ունենան դուցէ, երբ հայերուն համար ծոյլ կամ ապիկար կ'ըսուի: Եւ սակայն քիչ մը իմաստասիրաբար հետազօտենք թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այդ աշխատութիւնը: Տեսակ մը մեքենական, համակերպող կացութիւն է ատիկա. անօթի ծառա չի մնալու ստիպողականութեան հետեւանք: Փոխէ՛ պայմանները, ու այլ եւս մեքենան կը դադրի. միտքը չէ որ կ'աշխատի, այլ մարմինը, այլ մեքենան. գործելու եղանակը փոփոխութիւն չէ կրած, կամ շատ քիչ, սկսեալ նախնիքներէն մինչեւ մեր օրերը, ինչ ասպարէզի մէջ կուզէ թող ըլլայ: Այդ տեսակ աշխատութեան բառը Պ. Վ. Բ. գործածած էր իր յօդուածին մէջ՝ «Եղան աշխատութիւն»: Մենք յաճախ տեսակ մը պարծանքով կ'ըսենք թէ «մեր նախնիքներէն ինչ որ տեսած ենք, այնպէս կ'երթանք». բայց ասիկա ծոյլաբան է, և այսպէս է առ հասարակ ամէն արեւելեան աղգերու հոգեկան վիճակը և ասով է որ գլխաւորաբար կը տարբերին Արեւմտեան աղգերէն: Հետեւանք այն կ'ըլլայ որ վերջինները հետզհետէ յառաջ կ'անցնին ու մենք ուր որ էինք հոն կը մնանք:

* * *

Մեր այս թերութիւնները կարելի՞ է մէջտեղէն վերցնել թէ ոչ: Ինչո՞ւ. չէ: Եթէ այդ բանը անկարելի ըլլար, աւելորդ էր գրել, վիճիլ ու քննադատել: Աղգերը իրենց միջավայրին զոհերն են. եթէ հայերը փոխանակ թուրքիոյ, Ամերիկայի մէջ ծնած ու ապրած ըլլային, այսօրուան ծուլութիւնը կամ ապիկարութիւնը չպիտի ունենային: Հարկաւոր է ուրեմն միջավայրը փոխել, ինչ որ մէկ ձեռի տակ չի ներկայանար, անոր մէջ կը մոռնեն երկրին կառավարական դրութիւնը, ժողովուրդը չըլլապատող զանազան տարրերը, դուրոցական կրթութիւնը ու մամուլը: Մեր անուս կամ թերուս չափահասներուն Դպրոցը մամուլն է. մամուլի խթանը Ս. Գրոց այն «Օրհնեալ փայտն է որ արքայութիւն կը տանի»: Միամտութիւն է ենթադրել թէ Եւրոպացիք մեր քննադատութիւններով գէշ գաղափար կը կազմեն մեր վրայ, անոնք իրենց գաղափարը մեր գործերէն կը կազմեն և ո՛չ թէ մեր գրածներէն:

Իսկ թէ Եւրոպացի հետազօտողներ ինչե՛ր գրեր են մեր մասին, այդ երկրորդական կարեւորութիւն ունի մեզի համար, նոյն իսկ եթէ կարգացած չըլլանք անոնց գրքերը, ինչպէս կը յայտարարէ յարգելի յօդուածագիրը (թէեւ չենք յիշեր թէ ե՞րբ անցաւ ընտուլութիւն անցուցեր ենք իր առջեւ, քանի որ պատիւ ալ չունինք զինքը ճանչնալու, գոնէ իր Վ. Բ. ձեռին տակ): Մեզի համար օգտակարագոյն աշխատութիւն մին է մեր քթին տակ գտնուող ժողովուրդը մօտէն ուսումնասիրել քան թէ օտարներու գրածները կար-

դալով ժամանակ անցունել : Ամէն պարագայի մէջ, ինքզինքնիս բարեբախտ կը համարինք որ Կովկաս ու Անաթոլի ճամբորդող հոշակաւոր Բարոն ֆոն Հաքսթհաուզէնը հայերը կը ներկայացնէ իբր հակապատկեր քուրճի. մեր նախորդ յօդուածին ոգին ալ նոյնն էր. այս պարագան Պ. Վ. Բ.ի սրատեսութենէն վրիպած ըլլալու է :

* *

Երկու տող ալ մեր Աղեքսանդրիոյ «բարեկամներուն», որոնք այնքան անտեղի աղմուկ յարուցին մեր յօդուածին շուրջը իրենց «ազգասիրական», եռանդին ըսելիք չունինք. միայն թէ կը փափաքէինք որ թերթին Տնօրէն-Խմբագիրը յօդուածագրէն զանազանելու չափ խելք ու ազնուութիւն ունենային :

Աղեքսանդրիա

Լ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաքական ժողովն իր երեկի նիստին մէջ զնահատելի տնօրինութիւն մը ըլլած է, որոշելով որ այսուհետեւ իր օրակարգին վրայ գտնուած և հանրային կարեւորութիւն ունեցող խնդիրներու մասին տուած որոշումներն հաղորդէ Փարոսին, ի գիտութիւն հասարակութեան :

Ըստ այսմ, Առաջնորդարանի Դիւանատունէն հաղորդուած են մեզ երէկուան նիստին մէջ եղած հետեւեալ տնօրինութիւնները.

Գաւ. երեսփոխանական ժողովոյ մէջ սկզբմամբ որոշուած ըլլալով Գահիրէի և չըջակայից ազգայնոց մարդահամարը կատարել և գործողութիւնն յանձնուած ըլլալով Քաղաքական ժողովին, այս վերջինն իր երէկի նիստին մէջ հարկ եղած նախապատրաստական տնօրինութիւնները կատարելէն ետք, որունց տպագիր ցուցակներ յանձնել բաժանայններուն որոնք հայաբնակ թաղերը շրջելով, պիտի արձանագրեն հարկ եղած ծանօթութեամբ : Այս ցուցակներ ի վերջոյ պիտի ամփոփուին Առաջնորդարանի մէջ պատրաստուած մարդահամարի յատուկ տուեալին մէջ :

* *

Քաղաքական ժողովն որբերու ծանօթ խնդիրը ուղարկութեան առնելով, Յանձնաժողով մը կազմեց որուն պաշտօնն է իգիպտոսի մէջ հանգանակութիւն կատարել ի նպատակ Հայաստանի որբերուն և արդիւնքը պարբերաբար զրկել ի Պատրիարքարան, իր մարդասիրական նպատակին գործածուելու համար : Աւասիկ Յանձնաժողովի անդամները.

Տեաքը՝

Բարթիկ	Նահապետեան
Բիէն	Բոյատ
Մկրտիչ	Մանուկեան
Մկրտիչ	Պայրքեան
Մովսէս	Անանեանց

* *

Բարեյիշատակ կարասիւտ տղա Գալստեանէ Գա. հիւրէի ազգային վարժարանին նուիրեալ գետիններէն միոյն, Շէյխ-Մէթման-Աղիզլիէի էպատիլէին և արմաւենեաց աճուրդին նոր վարձակալութեան համար՝ ասկէ առաջ Քաղաքական ժողովոյ կողմէ պաշտօնական յայտարարութիւններ եղած էին տեղական լրագրաց մէջ :

Նախորդ չաբթու փակուեցաւ աճուրդն և էպատիլէն քօքի առաջիկայ երկու տարուան համար վարձու տրուեցաւ, Ֆէտտանը (իրը 4200 ք. մ.) 250 եգպ. ողջ զրուշի : Էպատիլէն ազգին անցնելէն 10 տարին երէք ի վեր, այսչափ բարձր գնով վարձու տրուած չէ երբէք : Քաղաքատմամբ անցեալ տարուան, ուր իրր 370 Ֆէտտան մշակուած է, Ֆէտտանի վարձքն ըլ-

լալով 235, նոր վարձատուութեան տարեկան առաւելութիւնն է 55 1/2 եգպ. ոսկի :

Հետեւելով անցեալ տարուան թիւերուն, կը տեսնուի թէ վճարուելէ յետոյ հողային և արմաւենեաց տուրքն՝ կը մնայ վարձուց զուտն՝ գրեթէ 375 եգպ. ոսկի :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի անգլիական գաղթականութիւնը մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէ, չքեղ կերպով տօնելու համար Վերթորիա թագուհւոյն դահակալութեան 60ամեայ յորէլեանը : Երեքշաբթի առաւօտ, Ապտինի հրապարակին վրայ զօրահանդէս մը պիտի կատարուի և միջօրէէն յետոյ, Կիզէի պարտէզին մէջ դաշտային հանդէս : Նոյնպէս եկեղեցական արարողութիւնք՝ առաւօտուն և գիշերն՝ հացկերոյթ : Հաւանաբար նախաբարները Գահիրէ պիտի գան՝ շնորհաւորական այցելութիւն տալու Լորա Բրոմբրին : Աղեքսանդրիոյ մէջ ալ պատրաստութիւններ կը տեսնուին և հանդէս մը պիտի կազմակերպուի ի Սան-Սթէֆանօ :

— Հինգշաբթի իրիկուն ձիտտէէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէր թէ վերջին 24 ժամուան մէջ ժամտախտի միակ դէպք մը պատահեր է :

— Աղեքսանդրիոյ Բաս-էլ-Թին զօրանոցին առջեւ, ուր անգլիացի զինուորները կը բնակին, չորեքշաբթի օրը ֆէլլահ պատանի մը սպաննուած էր հրացանի գնդակով մը որուն ուսկից գալը անյայտ մնացած էր : Թէեւ ի սկզբան կատարուած քննութիւնները տպարդիւն մնացին, բայց երէկ, անգլիացի զինուոր մը ինքնաբերաբար խոստովանել է թէ ինքն է հրացանի հարուածը պարպողը այդ տղուն վանդի քար մը նետած էր փողոցէն և զինքը վիրաւորած էր այտէն :

Այս լուրին վրայ, քանի մը հարիւր բնիկներ համախմբուեցան զօրանոցին առջեւ՝ սպառնական երեւոյթով, բայց Խտիվական թիկնապահի մը և ոստիկաններու միջամտութեամբ ցրուեցան : Անգլիացի զինուորը ձերբակալուած է :

— Նեղոսին բարձրացումը սկսած է երկու օրէ ի վեր ի Տօնկօլա : Մարալիի նիւթները ջուրերուն երկու մէթրի բարձրացումը կը ցուցունէր :

— Աղեքսանդրիոյ խառն դատարանը հինգշաբթի օրը զրազեցաւ Ռիւթէրի գործակալութեան կողմէ արարեղէն էջ-Մուայեաս լրագրին դէմ բացուած դատով, որով կը բողոքէր իր հեռագիրներուն նկատմամբ հրատարակած քննադատութիւններուն դէմ : Դատարանն անպարտ արձակեց էջ-Մուայեասը և Ռիւթէրի գործակալութիւնը դատապարտեց դատական ծախքերու :

— Սուաքինէն առնուած լուրերու նախելով, տէրվիչները մտադիր են եղեր պաշտպանողական գիրք բռնել Ումուրմանի մէջ : Օսման Տիկմա հրոսախումբեր ճամբայ հանել է՝ կառավարութեան բարեկամ ցեղերու գիւղերն աւրջակելու համար :

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Աթէնք. 17 յունիս. — Հաշտութեան կնքման յապաղումը կը սպառէ Յունաստանի ուժերը : Աթէնքի օտար դեսպաններն իրենց կառավարութեան տեղեկագրեցին :

18 յունիս. — Պ. Արքիտիա բողոքեց սահմանագլխի չեղող դօսին յարգուած չ'ըլլալուն, Թեսաղիոյ մէջ թուրքերու գործած բռնութիւններուն ինչպէս նաեւ Թեսաղիան թուրքիոյ միացնելու համար բնակիչներուն վրայ ի գործ դրուած ճնշման դէմ :

ՀԱՆՆԱՆ (Կրէտէ) 17 յունիս. — Խաղաղասիրական նպատակով, ծովակալները խնդրեցին օսմ. իշխանութիւններէն որ թուրք զօրքերը քաշուին Հիւրաքէդրաէն : Թէվֆիգ փաշա՝ Կ. Պօլէն եկած հրամաններու համեմատ՝ կը մերժէ :

ԲԱՐԻՉ, 18 յունիս. — Ահուրի փոթորիկ մը մեծ վնասներ հասցուց Բարիզի աւելմտեան արուարձաններուն : Երեք հոգի մեռան, և քսան հոգի վիրաւորեցան :

ԿԱԼԿԱԹԱ, 18 յունիս. — Երկրաշարժի թելթել ցնցումներ զգալի կ'ըլլան ի Պէնկալ : Կը վախցուի Կարլաթայի համար : Ասամի մէջ ահագին վնասներ կան : Թագուհւոյն յորէլեանին առթիւ լուսավառութիւն չի պիտի կատարուի երկրաշարժի պատճառաւ :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Գ. . . Աղեքսանդրիա. — Ձեր դիւարը ցախալից մեր ձեռքը չէ հաւած :

Հ. Հ. Գահիրէ. — Խմբագրանոցը այցելուներու համար բաց է առաւօտեան ժամը 10:00 11 փայց :

Կ. — Մեր սովորութիւններու մէջ չէ :

Կ. Ն. Գահիրէ. — Այդ նկարագրութիւնը ուրիշ բերքի մը մէջ աղէն ցայուած է եղիւ : Աւելորդ յոգնութիւն մը պատճառեցի ինքզինքնուր . . . մահաւանդ մեզի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹԻՒՆ

Պ. Ս. Դարբինեան «Հայերէնէ Արաբերէն» դրպանի բառարան մը յօրինած է, որ 4000է աւելի պիտանի բառեր և ստացուածքներ կը պարունակէ :

Ամեն անոնք որ Եգիպտոսի մէջ հաստատուիլ կ'ուզեն և արաբերէն չեն գիտեր, լաւագոյն բառարան մը չեն կրնար գտնել քիչ ժամանակի մէջ այս լեզուին բնութեան պատկերը :

Այդ պիտանի փոքրիկ հատորը կը ծախուի ի գին 10 եգիպտական ողջ դահականի :

Դիմել «Փարոս»ի խմբագրատունը :

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սասմոսի, մորթի եւ ջղային հիւանդութեանց : Կ'ընդունի իրեն դիմող հիւանդները Մէզօն Զահար, Շէքիթս Զօքիի ճիւղ դէմը. ամեն օր առաւօտեան ժամը 10:00 12 եւ կէս օրէն վերջ 3:00 5: Բոլոր վկայեալ աղբաւթի կը դարմանուին :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈՐԵՆԱԿՆԵՐՈՒ

Սկսեալ Յունիս 18 Ուրբաթ օրէն, այսուհետեւ Խտիվական շոքենաւները իրենց Բիւրէի և Կ. Պօլսոյ կանոնաւոր ուղեգծին պիտի հետեւին :

Աղեքսանդրիա 15 Յունիս 1897

Le Gérant: HENRY SAKAKINI

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵՔԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՏԱՆՈՐ ՄԵՐԵԱՆՈՅ «ՇԱՐԱ ԱԳԱՄ»
ԽԱՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ:

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԵՔՆԵՐՈՒ

ՍԻԿԱՐԷԹ ՌՈՒԱԵԱՂ 1000 ՀԱՄԱՐ 2 1/2 ԱՆԳ. ՈՍԿԻ

Խճախլալ	2	2	2
Պալատական	1 1/2	2	2
Պոճա	1 1/4	2	2
Նախընտրել	1	2	2
Փոռ	20	Ֆրանկ	

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ԶՂԱՅԻՆ ՇԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ սրճի, շնչառական գործարաններու, ար-
եան և ջրային հիւանդութիւններու:

Կը յանձնարարուի հեծելանքի գործածողներուն:
Մանչեսթրի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ՄԵՐԵԱՆՈՅ. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱՆԿՐՈ—
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՂԵՂԱՐԱՆՆԵՐ ԷԳՅԵՖԻԵ, ԴԱԽԻՐԷ:

ՀԱՄՄԱՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՄՄ ՓԱՏԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՑ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ԶՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ,
ԵՆԵԿՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Էրիկ մարդոյ համար առաւօտեան ժամը 7էն 10
և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:
Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ
կէս օր:

Պարար և կիրակի օրերը միակցեալ Էրիկ մարդոյ համար
կիրակի և տօն օրերը ՀԱՄՄԱՄԸ կէս օրէն վերջ
գոյ է:

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ զէմ բացած խանութին
մէջ ամենէն գէշուարահանները գոհացնելու
եղանակաւ կ'արդուկէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով:

Ուզողներու համար լուացարարութեան
հիւշ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախորդ-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուարու
գնահատելի դրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախորդաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն
և պիտի վերադարձնէ:

Տ Պ Ա Ր Ա Ն
ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵԶՈՒԷ ԶՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԽԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՆՈՒԽ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն ինա-
մօք և փութով կը կատարուին:

Վայրկենական սպարոքիւն այցեֆաւսերու եւ տոմարու

Տպարանը բաց է ամէն օր բացի կիրակի եւ տօն օրերէ առաւօտեան ժամը 7էն մինչեւ երեկոյեան 7:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵՅԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	ամիսայ.	կէս ուղ.	ամիսայ.	էքսորէս	ամիսայ.	էքսորէս	ամիսայ. և	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	առտ. 4 45	—	7 —	8 15	9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	»	երեկոյ 3 10	7 34	9 41	12 49	երեկոյ 11 58	7 59	7 7	—	3 51
Աղէքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		ամիսայ.	կէս ուղ.	ամիսայ.	էքսորէս	խառն	ամիսայ.	էքսորէս	ամիսայ. և	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առտ. 1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Աղէքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա	ժամ.	երեկոյ 12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53	Իսմաիլիա	»	երեկոյ 1 20	7 5
Զակաղիկ	ժամ.	1 34	8 54	Զակաղիկ	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա	ժամ.	4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —		մեկ.	4 17	9 4
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35